«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2023-2024
Մայրենի (7-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____
Դպրոց _____
Դասարան _____ Խումբ _____

Արքայական խոսքը մեր կմնա հավետ...

Վահան Տերյան

1. Սիրելի՛ բարեկամ, ուշադի՛ր կարդա տեքստը:

Իշխանի ու հարուստի որդիները մտերմացան և դուրս եկան իրենց ոստանից՝ աշխարհ շրջելու: Գնացին հասան մի բերդի դռան: Տեսան, որ դարպասից շատ մարդու գլուխ էր կախված: Ապշահար ու զարհուրանքով մտան ամրոց: Ընդառաջ եկած ծառան նրանց տարավ պալատ՝ թագավորի մոտ:

Արքան երկու հյուրերին շատ սիրալիր ընդունեց, խրախճանքի սեղան բացեց, հյուրասիրեց նրանց համադամ խորտիկներով, ընտիր գինով, աղանդերով: Երբ հարուստի որդին մի պահ դուրս ելավ խնջույքի սրահից, թագավորը իշխանի որդուն ասաց.

— Դու թագավորի ես նման, իսկ այդ ընկերդ անարգ և ստոր մարդ է երևում, դու այդպիսի ընկերոջ հետ ինչո՞ւ ես մտերմություն անում:

— Թագավո՛ր,— պատասխանեց իշխանազունը,— ի՞նչ պակասություն ասես, ես ունեմ, բայց ընկերս իմ ամենից սիրելի մարդն է. մինչև կյանքիս վերջը ծառայելու եմ նրան:

Երբ հարուստի տղան ներս մտավ, դուրս ելավ իշխանի որդին: Եվ թագավորը նույն բանը մեծատունի որդուն ասաց:

— Ո՞վ արքա, — պատասխանեց հարուստի տղան,— ես նրա անարժան սպասավորն եմ:

Տեսնելով նրանց ընկերասիրությունը և անձնվիրությունը՝ թագավորը շատ ընծաներ տվեց և խաղաղությամբ ճանապարհ դրեց ընկերներին:

— Թագավո՛ր,— հարցրին նրան նախարարները,— քեզ մոտ եկած բոլոր հյուրերին մեծարեցիր և երեք օր հետո կտրել տվիր գլուխները: Պատճառն ի՞նչ է, որ այս երկու հյուրերին նվերներով ճանապարհ դրիր:

2. **Քո կարծիքով ի՞նչ պատասխանեց արքան: Նրա պատասխանը գրի՛ր երկու նախադասությամբ** (2 միավոր):

---

3. **Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր իրար հոմանիշ բառերի զույգեր** (3 միավոր):

---

4. **Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր այս բառակապակցությունների իմաստն արտահայտող բառերը** (3 միավոր):

Ճաշից հետո մատուցվող քաղցր ուտելիք ----------

Համեղ, ընտիր կերակուր----------

Իշխանի զավակ----------

Սարսափի և ահի զգացում----------

Թագավորանիստ քաղաք կամ մայրաքաղաք----------

Հավատարմությամբ մի բանի կամ մեկին նվիրված լինելը----------

5. **Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր նույն արմատն ունեցող բառերը, բառերը վերլուծի՛ր բառակազմորեն, ընդգծի՛ր այդ արմատը** (2 միավոր):

---

6. **Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր *ուրախ, ուշ, ամուր, շուրջ* արմատներն ունեցող բառերը. այդ արմատներով մեկական բառ էլ դո՛ւ գրիր** (4 միավոր):

---

7. **Անդավաճան ընկերության մասին առա՛կ հորինիր: Վերնագրի՛ր առակը (6 միավոր):**